



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 22 ՅՈՒՆԻՍ, 2024

ՏԵՐՈՒՄԱՆ ԱՊՈԹԷ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, քուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 53

ՄԱՐԴՈՒՆ ԱՆՄՏՈՒԹԻՒՆԸ

Անմիտ մարդիկ իրենց մտքին մէջ ըսին.-
«Աստուած չկայ», ուստի ապականեցան,
եւ զգուելի մեղքեր գործեցին.
չկայ մէկը որ բարին գործէ:
Աստուած երկինքէն կը նայի մարդոց,
տեսնելու համար՝ թէ կա՞յ իմաստուն մարդ մը,
որ Աստուծոյ դառնայ:
Ամէնքն ալ մոլորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան.
չկայ մէկը որ բարին գործէ,
չկայ մէկը, ոչ իսկ մէկ հոգի:
Երբեք խելքի պիտի չգա՞ն
անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուրեն, հացի պէս,
եւ Աստուծոյ չեն աղօթեր:
Բայց յանկարծակի ահ ու դողի պիտի մաքնուին.
ահ ու դողի մը՝ որուն նմանը չէ եղած երբեք.
որովհետեւ Աստուած ցիր ու ցան պիտի ընէ
քեզ պաշարողներուն ոսկորները,
եւ դուն զանոնք ամօթահար պիտի ձգես,
որովհետեւ Աստուած մերժեց զանոնք:
Ոհ, տեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը,
որ Սիոնէն պիտի գայ:
Երբ Աստուած ետ դարձընէ գերի փարուած իր ժողովուրդը,
Յակոբի սերունդները պիտի ցնձան եւ ուրախանան:

ՇԱՐՄԱՆ-ՍՊՈԹԷ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ թո՛ղ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ թո՛ղ արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ՄԱՐԴՈՒՆ ԱՆՄՏՈՒԹԻՒՆԸ

Այս Սաղմոսը նոյն 14-րդ Սաղմոսն է: Կրկնության գնով, որպեսզի, առաջին հերթին Իսրայելի ժողովուրդը զգաստության հրաւիրելու առիթ ըլլայ, եւ երկրորդ՝ քաջալերանք եւ յոյսի առիթ որ Աստուած դարձեալ պիտի ազարագրէ իր ժողովուրդը:

Այնքան ճշմարիտ եւ իրաւացի է Սաղմոսին բառերը, երբ կ'ըսէ. *“Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին. ‘Աստուած չկայ’, ուստի ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան. չկայ մէկը որ բարին գործէ’*: Այո, այնքան արեւն, որ մարդը ոչ թէ միայն Աստուծմէ հեռու է, այլ՝ առաւել եւս երբ կը շեշտէ ըսելով, թէ Աստուած չկայ, անխուսափելի են անոր արարքները: Այլ խօսքով՝ ընելու է այն ինչ որ կ'ուզէ ընել: Երբ մարդ արարածին մտքէն, սրտէն, հոգիէն կը հանենք Աստուծոյ ներկայութեան հասկացողութիւնը, զգացումն, ու մանաւանդ՝ հաշուերութեան գիտակցութիւնը, մարդ արարածը ուրիշ բան չէ եթէ ոչ իր կիրքերով, ցանկութիւններով ու բնագոյով ապրող, շարժող արարած: Մտքին եկածը, սրտին ուզածը ընելու եւ իր կիրքերն ու բնագոյը գոհացնելու համար: Երկրորդ, Դաւիթ յարակօրէն ցոյց կու տայ, որ անմիտ մարդը ոչ թէ միայն իր մտքին մէջ կ'ըսէ որ Աստուած չկայ, այլ նաեւ՝ իր սրտին մէջ, եւ սրտին մէջ ըսել կը նշանակէ, ընդհանրապէս զԱստուած հեռացնել, որ կապ ունի բարոյական հասկացողութեան: Յովհաննէս Առաքեալի Աւերարանին մէջ, այս երեւոյթին մասին Քրիստոս այսպէս կ'արտայայտուի ըսելով. *“Ով որ չարիք կը գործէ, կ'արեւ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը յայտնի չլլան’*: Այս պարագային, յարակ է, որ Աստուած չկայ ըսող մարդը, այն մարդն է որ չարիք կը գործէ, եւ հեղեւաբար իր սրտին, մտքին մէջ չարութիւն է որ կայ: Իսկ Աստուծոյ փնտրածը, որպէս կայ արդէօք մէկը, որ ղԱստուած փնտրէ, այնպէս ինչպէս անառակ որդիին պարագային, եր դառնալու իր հօրը փունը: Աստուծոյ փնտրածը իմացական հասկացողութեամբ չէ, այլ որքան բարոյական ու հոգեւոր:

Եթէ մարդը իր սրտին մէջ կ'ըսէ Աստուած չկայ, ապա՝ Աստուած վերէն կը նայի մարդուն: Այնպէս չէ որ Աստուած երես դարձնէ, այլ ընդհակառակը, Աստուած մնայուն սպասումի մէջ է, որ արդէօք այս նոյն մարդը երբ է վերադառնալու: Ահա թէ ինչու երբ հասաւ պահը, յարմար ժամանակը՝ Աստուած Իր միածին Որդին դրկեց աշխարհ, որպէսզի ով որ Անոր հաւատարմ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ: Բայց յարակ է, որ մարդը ինք ի վիճակի չէ զԱստուած փնտրելու: Անոր համար է որ Քրիստոս պիտի ըսէ. *“Եթէ Հայրս ձեզ չկանչէ, դուք չէք կրնար ինձի գալ, եւ առանց ինձի չէք կրնար Հօրս երթալ’*: Ահա անոր համար է որ Աստուած ալ կը փեսնէ որ մէկ իսկ հոգի չկայ, որ Աստուծոյ վերադառնայ, ամէնքն ալ խոտորեցան ու մոլորութեանց գիրկը ինկան: Դաւիթը յարակօրէն ցոյց կու տայ, որ բոլորն ալ խոտորեցան, այնպէս չէ որ քանի մը հոգիներ կան, որ բարիք կ'ընեն, եւ կարծէք Աստուած ալ զանոնք չէ փեսած կամ չի կրնար փեսնել: Ընդհակառակը Աստուած ամէն ինչ ալ կը փեսնէ, բայց հարցը կը կայանայ անով, որ բարիք գործելը կ'ըլլայ այն արեւն երբ Աստուծոյ հոգիով է որ կ'առաջնորդուինք: Անոր համար է որ Քրիստոս առիթով մը մեծահարուստ երիտասարդին պիտի ըսէր, ինչու զիս բարի կ'անուանես, որովհետեւ Աստուած միայն բարի է:

Ահա այս երեւոյթը պարզող հաստատումն է մեր այսօրուան հաստատումը: Միտելիներ, մենք յաճախ ունինք, կամ կ'ունենանք այնպիսի փառաբանութիւն մը, որ Աստուածաշունչ Մարեանը կ'ընդունինք որպէս սուրբ ու սրբազան գիրք: Ընդդէմ է սուրբ ու սրբազան գիրք է, Աստուծոյ փրկութեան ծրագիրը ներկայացնող գիրք է: Միւս կողմէ, նաեւ, Աստուածաշունչը մարդը իր ամբողջ մտածողութեամբ պարկերացնող գիրք է, որուն համար է, որ նաեւ այդ փրկութեան ծրագիրը կայ: Անկեալ մարդը, մեղքի մէջ ինկած մարդը, ապականած ու զգուելի արարքներու մէջ եղող մարդը, որ կարիքը ունի փրկութեան: Ուստի, Աստուածաշունչ Մարեանը մեզի կը ներակայացնէ մարդը իր իսկութեամբ, այնպէս ինչպէս որ կայ: Այս բոլորի պարզաբար մարդու անմտութիւնն է, մարդը Աստուծմէ հեռու ըլլալու հանգամանքն է, որ զինք կ'առաջնորդէ դէպի անդունդ:

Ահա այսպիսի կացութեան մէջ նաեւ կ'ապրի Աստուծոյ մարդը, Աստուծոյ ժողովուրդը: Կ'ապրի այնպիսի վիճակի մը մէջ ուր Աստուած չկայ ըսող մարդը Աստուծոյ ժողովուրդը կ'ուրբ հացի պէս: Յաճախ այնպիսի փառաբանութիւն ունինք, որ այսպիսի մարդիկ կը մնան անպարիժ, նաեւ Աստուած կարծէք անփեսած է Իր ժողովուրդը, բայց այսօրուան հաստատումը յստակօրէն ցոյց կու տայ, թէ այդպէս չէ պարագան, հապա *“յանկարծակի՝ Տէրը զիրենք ահ ու դողի պիտի մարնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է’*: Որքան ալ զօրաւոր կը թուին, սակայն խորքին մէջ ահ ու դողի պիտի մարնուին: Յիշենք Նաբուգոդոնոսոր թագաւորը, ու անոր փեսած երագը, երբ արթնցաւ փազնապա՛ս: Թագաւոր մը, որ ամբողջ ժողովուրդները սարսափեցուցած էր, յանկարծ ինչ պարահեցաւ, ինչպիսի երագ մըն էր, որ փազնապեցուց: Ի վերջոյ, Դաւիթ հեռուի պարկերով, զաւիքի կարարումով կը ներկայացնէ Աստուծոյ պարարաստ փրկութիւնը, որ պիտի կարարարուի ու իրականանայ Յիսուս Քրիստոսով: